

տարակոյս Հ. Հացունի լաւ գիտէ որ հնուտի եւ փոքր հանդերձ (որ ըստ իրեն կապերտին նշանակութիւնն է) օժիտ չի բերուիր: Ուրեմն գիտնական Հօր բերած վկայութեամբ կապերտ հոս տարբեր բան կը նշանակէ իր ըսածէն: Կինը կապերտ բերելով իր օժիտին մէջ՝ օժիտին համար պատրաստուած եւ յատուկ բան մը կը բերէր: Արդարեւ մինչեւ մեր օրերը Հայաստանի եւ իր բոլոր դրացի երկիրներուն մէջ՝ օժիտի անբաժանելի մաս կը կազմէ կապերտ մը, որ նոյնիսկ ամուսնանալիք աղջիկը իր մատներով կը հիւսէր իր վաղ տարիքին: Այս կապերտը օտարները մասնաւոր կերպով կ'անուանեն քըզ քիլիմ, այսինքն աղջկան կապերտ (անխաւ գորգ) եւ այդպէս ալ ծանօթ է այժմու հրապարակին վրայ: Այսպէս կարելի է հեշտութեամբ եւ ճշտութեամբ մեկնել Ոսկերերանի այս վկայութեան իմաստը: Կինը դանդաղաբերութեամբ որ դեռ զիմ կապերտն ունիմ ըսել կ'ուզէր որ ամուսինէս դեռ ոչ մէկ բարիք ստացած եմ, եւ աղջիկութեանս բաներովն է որ կը բաւարարուիմ:

Դարձեալ սրբոյ է Պաւլոսի եւ ոչ կապերտ անգամ գուտլիք գրտանէր արկաթեղ վկայութիւնը, որուն իմաստը սա է. այնքան տնայնիկ էր որ ինքզինքն ծածկելու կապերտ իսկ չունէր: Յիշեցնեմ որ 1694ին Պարսից Շահ Սուլթան Հիւսէյինը, Նոր Զուլայի հայերը կրօնափոխ ընելու համար դանոնք ենթարկեց չառ մը խստութեանց եւ անարդանքներու: Իր բռնի օրէնքներէն մին ալ կը ստիպէր հայերը «ի վերայ թիկանց ձգեսցեն զկապերտս հին»⁽⁷⁾, անշուշտ դանոնք իբր տնանկ, աղքատ, անարգ ցոյց տալու համար:

Երկրտելու չէ որ կարելի է կարօտ ըլլալ կապերտի միոջ ձորձոյ: 1932ին Բաղէշի գիւղերէն 17 հայ գաղթականներ խիստ ողբալի վիճակի մէջ Տիարպէքի կը հասնին, ուր տեղացի հայերը իրենք ալ գաղթականներուն նման ընչազուրկ «եկեղեցիին հինցած ու մաշած կապերտներէն ցնցոտիներ չինած են յիշեալ զժրազոյներուն, անոնց մեղքութիւնը ծածկելու համար»⁽⁸⁾:

Հ. Հացունի ալ գիտած է որ մեր ոսկեդարեան թարգմանիչները ուր որ կապերտ գործածած են իրենց թարգմանութեանց մէջ՝ յունարէն բնագիրներուն մէջ այդ բառը կը պակսի: Որոշ է որ մեր թարգմանիչները ոչ միայն թարգմանած, այլ նաեւ իրենց թարգմանութիւնները հայացուցած եւ բնագիրներուն մէջ գործածուած յոյն կամ օտար սովորութեանց, իրերու, ըմբռնումներու տեղ հայ ժողովուրդին ծանօթ եւ գործածական եղածները նշանակած են: Ասիկա մեր հին թարգմանութիւնները մեղի համար կ'ընէ մեծարժէք դանձարան մը, նոյնիսկ մեր աղագային սովորութեանց, կեանքին, ըմբռնումներուն համար: Այս ճոխ եւ ընդարձակ դանձարանը զժրազոյարար հարեանցի իսկ չէ ուսումնասիրուած դեռ:

(7) Պատ. Նոր Զուլայու: Յ. Թ. Տէր Եովհաննէանց 1880, Բ. մաս, էջ 203:

(8) Հայ. Կոչնակ, Նիւ Եորք, 1932, էջ 1204: